ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԼՈՌԻ ԲԵՐԴ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԼՈՌԻ ԲԵՐԴ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լոռի Բերդ, միջնադարյան անառիկ ամրոց ներկայիս Լոռու մարզում՝ Ստեփանավանից 4,5 կմ հեռավորության վրա: Գտնվում է Ձորագետ և Ուռուտ կիրճերի հատման մասում: Ընդգրկված է Լոռի Բերդի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Գյուղը հիմնադրվել է 1750-ական թվականներին, և նրա պատմությունը հարուստ է մշակութային ու պատմական ժառանգությամբ: Բնակավայրը գտնվում է Լոռի մարզի Ձորագետ և Ուռուտ գետերի միջնահատվածում՝ պատմական «Լոռի Բերդ» քաղաքի ավերակների մերձակայքում: Ամբողջ շրջանը հայտնի է իր պատմական նշանակությամբ, որտեղ պահպանվել են տարբեր դամբարադաշտեր, եկեղեցիներ և այլ միջնադարյան կառույցներ: Լոռի Բերդի շրջակայքում կան մի շարք հնագույն ու կարևոր կառույցներ՝ 10-րդ դարի «Լոռի Բերդ» քաղաքը, 12-13-րդ դարերի եկեղեցիներ, կամուրջներ և բաղնիքներ: Գյուղից 1 կմ դեպի արևելք գտնվում է պատմական «Աշոտ-Երկաթ» ամրոցը՝ կառուցված 9-11-րդ դարերում և այժմ վերանորոգման փուլում է:
Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Գյուղում մշակվում են տարբեր գյուղատնտեսական մշակաբույսեր՝ ապահովելով եկամուտ իրենց ընտանիքներին: Անասնապահությունն այստեղ կարևոր դեր է խաղում գյուղի տնտեսության մեջ, ինչպես նաև նպաստում է կաթնամթերքի արտադրությանը: Վերջին տարիներին Լոռի Բերդ գյուղում կատարվել են մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն բարելավել համայնքի ենթակառուցվածքները և բնակիչների կյանքի որակը: Գյուղում իրականացվել է ճանապարհների բարեկարգում, ինչը հեշտացրել է տրանսպորտային կապերը՝ հատկապես այլ բնակավայրերի հետ: Բարելավվել են համայնքային կենտրոնները, որտեղ բնակիչները կարող են մասնակցել տարբեր սոցիալական և մշակութային միջոցառումների: Ասֆալտապատված է դեպի Լոռի Բերդ քաղաքատեղի պատմամշակութային արգելոց տանող ճանապարհը, սալարկվել են նաև ներբնակավայրային ճանապարհները, անց է կացվել գիշերային լուսավորության համակարգ, որը տարեցտարի արդիականացվում է: Լոռի Բերդ բնակավայրում կենտրոնացված է նաև գյուղտեխնիկայի և գյուղգործիքների համար նախատեսված ծածկատան կայանատեղին, որը բնակիչներին մատուցում է որակյալ գյուղական ծառայություններ:
Լոռի Բերդը նաև հարստացած է պատմական և մշակութային տեսարժան վայրերով, որոնք համարվում են մեծ գրավչություն զբոսաշրջիկների համար: Գյուղի մոտակայքում գտնվող հին կառույցներն ու միջնադարյան կոթողները հրաշալի հնարավորություն են ստեղծում զբոսաշրջության համար, և այս ոլորտը էլ ավելի զարգացվել է վերջին տարիներին: Լոռի Բերդը շարունակում է իր զարգացումը՝ պահպանելով այն պատմական ու մշակութային արժեքները, որոնք դարձնում են այս բնակավայրը յուրահատուկ և հետաքրքիր:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Լոռի Բերդ գյուղը գտնվում է Լոռու մարզի կենտրոնից 38 կմ հեռավորության վրա՝ ծովի մակարդակից 1380 մ բարձրության վրա:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գյուղի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները անբարենպաստ: Տարվա եղանակներից անհամեմատ լավ է աշունը, ձմռանը երբեմն ձյուն չի գալիս, գարունը սովորաբար ուշացած է գալիս, հաճախակի քամիներով, իսկ ամառը տաք է, լինում են նաև կարկտահարություններ: Գյուղն ունի առողջարար կլիմա:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ստեփանավան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	0
2.2) մայրաքաղաքից (կմ)	150
2.3) մարզկենտրոնից (կմ)	30
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	23
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	3
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	30
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	33
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1385
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	5.23/523,04
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Լեջան,Բովաձոր,Ագարակ
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	+37494666791
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Մշտական բնակչության թվաքանակը	451
2. Գրանցված ծնունդների քանակը	3

2.Մահացության դեպքերի քանակը	4
3.Ամուսնությունների քանակը	2
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	125
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	19
7. Կենսաթոշակառուների քանակը	67
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	20

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	15,400
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	124

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	385,92
2. Բնակավայրերի հողեր (հա)	56,98
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	11,43
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	11,41

5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	41,63
7. Անտառային	0
8. Ջրային	12,67
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	218
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	405
11. Խոզերի գլուխաքանակը	120
12. Գյուղատնտեսական տեխնիկա	20
12.1 տրակտորներ (քանակը)	17
12.2 կոմբայններ (քանակը)	3
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	137

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	4
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	8
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	3
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	4
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	3,5
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.

1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	18 8
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	2

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Լոռի Բերդ բանակավայրի խմելու ջիր ներքին ցանցի նորոգում	Հնարավոր է միայն պետության աջակցությամբ